ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2019 թվականի ____________________ №_________ Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ** է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների՝ համաձայն N N 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածների:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել բուհերին տրամադրված տեղերի շրջանակում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

| | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|
| Ընդամենը | 1355 | 1264 | 91 |
| ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1139 | 1057 | 82 |
| Հայ-Ռուսական համալսարան | 25 | 25 | 0 |
| Հայաստանում ֆրանսիական համալսարան | 3 | 3 | 0 |
| Եվրոպական համալսարան | 8 | 8 | 0 |
| Հայաստանի ամերիկյան համալսարան | 20 | 17 | 3 |
| ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն | 17 | 14 | 3 |
| ՀՀ պետական կառավարման ակադեմիա | 41 | 38 | 3 |
| Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) | 3 | 3 | 0 |
| Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ | 2 | 2 | 0 |
| Արցախի Հանրապետություն | 30 | 30 | 0 |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 25 | 25 | 0 |
| ՀՀ ոստիկանություն | 10 | 10 | 0 |
| Միջպետական համաձայնագրերով ՀՀ պետական բուհեր ընդունված օտարերկրյա քաղաքացիներ | 23 | 23 | 0 |
| Պահուստային տեղ | 9 | 9 | 0 |

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

| | Մասնագիտությունը | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* |
| | **Ընդամենը** | **1139** | **1057** | **82** |
| | **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ** | **328** | **296** | **32** |
| 056101.00.7 | Մաթեմատիկա | | 7 | |
| 056201.00.7 | Վիճակագրություն | | 2 | |
| 056801.00.7 | Մեխանիկա | | 2 | |
| 056802.00.7 | Ֆինանսական մաթեմատիկա | | 7 | |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | 15 | |
| 055101.00.7 | Ֆիզիկա | | 10 | |
| 055102.00.7 | Ռադիոֆիզիկա | | 7 | |
| 071401.00.7 | Էլեկտրոնիկա | | 7 | |
| 071403.00.7 | Ռադիոտեխնիկա և կապ | | 2 | |
| 053101.00.7 | Քիմիա | | 3 | |
| 091601.01.7 | Ֆարմացիա | | 7 | |
| 051101.00.7 | Կենսաբանություն | | 5 | |
| 051202.00.7 | Կենսաֆիզիկա | | 2 | |
| 051201.00.7 | Կենսաքիմիա | | 4 | |
| 054101.00.7 | Երկրաբանություն | | 4 | |
| 054201.00.7 | Աշխարհագրություն | | 10 | |
| 101801.00.7 | Սերվիս | | 6 | |
| 061104.00.7 | Տեղեկատվական համակարգեր | | 7 | |
| 022201.00.7 | Պատմություն | | 8 | |
| 022202.00.7 | Հնագիտություն | | 3 | |
| 031501.00.7 | Մշակութաբանություն | | 3 | |
| 021801.00.7 | Արվեստի տեսություն և պատմություն | | 3 | |
| 022802.00.7 | Կովկասագիտություն | | 5 | |
| 022803.00.7 | Հայագիտություն | | 3 | |
| 031201.00.7 | Քաղաքագիտություն | | 6 | |
| 031801.00.7 | Միջազգային հարաբերություններ | | 12 | |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 7 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 13 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 3 | |
| 041101.00.7 | Հաշվապահական հաշվառում և հարկում | | 2 | |
| 022301.00.7 | Փիլիսոփայություն | | 5 | |
| 031301.00.7 | Հոգեբանություն | | 6 | |
| 092301.00.7 | Սոցիալական աշխատանք | | 6 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 031401.00.7 | Սոցիոլոգիա | | 4 | |
| 031804.00.7 | Հասարակայնության հետ կապեր | | 3 | |
| 023101.00.7 | Հայոց լեզու և գրականություն | | 12 | |
| 011101.00.7 | Կրթական գիտություններ | | 4 | |
| 032101.00.7 | Լրագրություն | | 6 | |
| 023102.00.7 | Օտար լեզու և գրականություն | | 15 | |
| 023201.00.7 | Լեզվաբանություն | | 25 | |
| 022102.00.7 | Աստվածաբանություն | | 4 | |
| 022101.00.7 | Կրոնագիտություն | | 2 | |
| 042101.00.7 | Իրավագիտություն | | 13 | |
| 031803.00.7 | Եվրոպագիտություն | | 3 | |
| 022801.00.7 | Արևելագիտություն | | 13 | |
| **ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ** | | **11** | **11** | **0** |
| 023101.00.7 | Հայոց լեզու և գրականություն | | 1 | |
| 022201.00.7 | Պատմություն | | 1 | |
| 101801.00.7 | Սերվիս | | 1 | |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 1 | |
| 023102.00.7 | Օտար լեզու և գրականություն | | 2 | |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | 2 | |
| 054201.00.7 | Աշխարհագրություն | | 1 | |
| 023201.00.7 | Լեզվաբանություն | | 1 | |
| 031301.00.7 | Հոգեբանություն | | 1 | |
| **«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ** | | **206** | **198** | **8** |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | 9 | |
| 071401.00.7 | Էլեկտրոնիկա | | 17 | |
| 071802.00.7 | Արդյունաբերական ճարտարագիտություն | | 4 | |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 14 | |
| 061105.00.7 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | | 12 | |
| 061901.00.7 | Տեղեկատվական անվտանգություն | | 13 | |
| 072401.00.7 | Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում | | 3 | |
| 071301.00.7 | Էներգետիկա | | 19 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 4 | |
| 071302.00.7 | Էլեկտրատեխնիկա | | 9 | |
| 071501.00.7 | Մետալուրգիա | | 3 | |
| 071503.00.7 | Մեքենագիտություն | | 3 | |
| 071502.00.7 | Մեքենաշինություն և նյութերի մշակում | | 3 | |
| 071601.00.7 | Տրանսպորտային համակարգեր | | 4 | |
| 071505.00.7 | Տրանսպորտային մեքենաշինություն | | 6 | |
| 071506.00.7 | Սարքաշինություն և չափագիտություն | | 5 | |
| 071403.00.7 | Ռադիոտեխնիկա և կապ | | 14 | |
| 071402.00.7 | Ավտոմատացում | | 7 | |
| 061102.00.7 | Ծրագրային ճարտարագիտություն | | 22 | |
| 061103.00.7 | Համակարգչային ճարտարագիտություն | | 17 | |
| 071101.00.7 | Քիմիական տեխնոլոգիա | | 2 | |
| 072101.00.7 | Պարենամթերքի տեխնոլոգիա | | 2 | |
| 071201.00.7 | Շրջակա միջավայրի պահպանություն | | 2 | |
| 021201.00.7 | Դիզայն | | 4 | |
| **ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ** | | **10** | **10** | **0** |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 2 | |
| 072301.00.7 | Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա | | 2 | |
| 073201.00.7 | Շինարարություն | | 2 | |
| 061105.00.7 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | | 4 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀԱՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ | | 5 | 5 | |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 3 | |
| 073201.00.7 | Շինարարություն | | 2 | |
| «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ | | 51 | 44 | 7 |
| 073101.00.7 | Ճարտարապետություն | | 8 | |
| 073102.00.7 | Քաղաքային տնտեսություն | | 2 | |
| 073201.00.7 | Շինարարություն | | 12 | |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | 4 | |
| 061104.00.7 | Տեղեկատվական համակարգեր | | 3 | |
| 021201.00.7 | Դիզայն | | 8 | |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 2 | |
| 041101.00.7 | Հաշվապահական հաշվառում և հարկում | | 2 | |
| 071601.00.7 | Տրանսպորտային համակարգեր | | 1 | |
| 101501.00.7 | Զբոսաշրջություն | | 2 | |
| «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ | | 95 | 90 | 5 |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 21 | |
| 041101.00.7 | Հաշվապահական հաշվառում և հարկում | | 15 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 23 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 18 | |
| 041401.00.7 | Շուկայագիտություն (մարքեթինգ) | | 11 | |
| 056201.00.7 | Վիճակագրություն | | 2 | |
| ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ | | 8 | 7 | 1 |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 2 | |
| 041101.00.7 | Հաշվապահական հաշվառում և հարկում | | 2 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 1 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 2 | |
| «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ | | 102 | 93 | 9 |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 39 | |
| 031501.00.7 | Մշակութաբանություն | | 4 | |
| 021401.00.7 | Կիրառական արվեստ | | 2 | |
| 021801.00.7 | Արվեստի տեսություն և պատմություն | | 2 | |
| 092301.00.7 | Սոցիալական աշխատանք | | 2 | |
| 031301.00.7 | Հոգեբանություն | | 11 | |
| 011301.00.7 | Ընդհանուր մանկավարժություն | | 8 | |
| 031401.00.7 | Սոցիոլոգիա | | 2 | |
| 032101.00.7 | Լրագրություն | | 2 | |
| 021503.00.7 | Թատերական արվեստ | | 2 | |
| 032201.00.7 | Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ | | 2 | |
| 021101.00.7 | Տեսալսողական արվեստ | | 3 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 2 | |
| 011201.00.7 | Նախադպրոցական մանկավարժություն | | 2 | |
| 011302.00.7 | Հատուկ մանկավարժություն | | 7 | |
| 052101.00.7 | Շրջակա միջավայրի գիտություններ | | 2 | |
| 054201.00.7 | Աշխարհագրություն | | 1 | |
| «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամ | | 61 | 59 | 2 |
| 031201.00.7 | Քաղաքագիտություն | | 2 | |
| 031801.00.7 | Միջազգային հարաբերություններ | | 2 | |
| 023201.00.7 | Լեզվաբանություն | | 29 | |
| 023102.00.7 | Օտար լեզու և գրականություն | | 5 | |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 8 | |
| 101801.00.7 | Սերվիս | | 3 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 031803.00.7 | Եվրոպագիտություն | | 2 | |
| 032101.00.7 | Լրագրություն | | 2 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 2 | |
| 011101.00.7 | Կրթական գիտություններ | | 2 | |
| 031804.00.7 | Հասարակայնության հետ կապեր | | 2 | |
| **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ** | | **36** | **36** | **0** |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 23 | |
| 031301.00.7 | Հոգեբանություն | | 2 | |
| 011301.00.7 | Ընդհանուր մանկավարժություն | | 3 | |
| 021401.00.7 | Կիրառական արվեստ | | 2 | |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | 2 | |
| 092301.00.7 | Սոցիալական աշխատանք | | 1 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 3 | |
| **«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ** | | **19** | **19** | **0** |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 12 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 1 | |
| 053101.00.7 | Քիմիա | | 2 | |
| 011101.00.7 | Կրթական գիտություններ | | 4 | |
| **«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ** | | **30** | **29** | **1** |
| 021501.00.7 | Երաժշտական արվեստ | | 2 | |
| 021502.00.7 | Կատարողական արվեստ | | 26 | |
| 021801.00.7 | Արվեստի տեսություն և պատմություն | | 1 | |
| **ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղ** | | **3** | **3** | **0** |
| 021502.00.7 | Կատարողական արվեստ | | 3 | |
| **«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ** | | **15** | **14** | **1** |
| 021101.00.7 | Տեսալսողական արվեստ | | 1 | |
| 021103.00.7 | Կինոարվեստ | | 3 | |
| 021301.00.7 | Կերպարվեստ | | 1 | |
| 021503.00.7 | Թատերական արվեստ | | 5 | |
| 021504.00.7 | Պարարվեստի ռեժիսուրա | | 1 | |
| 021801.00.7 | Արվեստի տեսություն և պատմություն | | 3 | |
| **ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղ** | | **1** | **1** | **0** |
| 021103.00.7 | Կինոարվեստ | 1 | 1 | |
| **«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ** | | **14** | **12** | **2** |
| 021201.00.7 | Դիզայն | | 6 | |
| 021301.00.7 | Կերպարվեստ | | 3 | |
| 021401.00.7 | Կիրառական արվեստ | | 2 | |
| 021801.00.7 | Արվեստի տեսություն և պատմություն | | 1 | |
| **ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղ** | | **2** | **2** | **0** |
| 021301.00.7 | Կերպարվեստ | 2 | 2 | |
| **«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ** | | **14** | **12** | **2** |
| 011301.00.7 | Ընդհանուր մանկավարժություն | | 2 | |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 5 | |
| 041101.00.7 | Հաշվապահական հաշվառում և հարկում | | 2 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 1 | |
| 031101.00.7 | Տնտեսագիտություն | | 1 | |
| 061103.00.7 | Համակարգչային ճարտարագիտություն | | 1 | |
| **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ** | | **11** | **9** | **2** |
| 091801.00.7 | Հանրային առողջություն և առողջապահություն | | 5 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 091601.00.7 | Ֆարմացիա | | 4 | |
| **«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ** | | **30** | **27** | **3** |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 19 | |
| 101401.00.7 | Սպորտ | | 6 | |
| 032101.00.7 | Լրագրություն | | 2 | |
| **«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ** | | **80** | **73** | **7** |
| 031802.00.7 | Ագրոէկոնոմիկա | | 9 | |
| 041101.00.7 | Հաշվապահական հաշվառում և հարկում | | 2 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 2 | |
| 041401.00.7 | Շուկայագիտություն (մարքեթինգ) | | 4 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 2 | |
| 041801.00.7 | Ագրոբիզնես | | 6 | |
| 052201.00.7 | Բնապահպանություն և բնօգտագործում | | 4 | |
| 071202.00.7 | Կենսագործունեության անվտանգություն | | 2 | |
| 071601.00.7 | Տրանսպորտային համակարգեր | | 2 | |
| 071602.00.7 | Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ | | 2 | |
| 072101.00.7 | Պարենամթերքի տեխնոլոգիա | | 13 | |
| 072301.00.7 | Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա | | 2 | |
| 073201.00.7 | Շինարարություն | | 4 | |
| 081101.00.7 | Ագրոնոմիա | | 7 | |
| 081102.00.7 | Անասնաբուծություն | | 3 | |
| 082101.00.7 | Անտառային տնտեսություն | | 2 | |
| 084101.00.7 | Անասնաբուժություն | | 7 | |
| **«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ** | | **7** | **7** | **0** |
| 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | | 4 | |
| 011301.00.7 | Ընդհանուր մանկավարժություն | | 1 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 1 | |
| 011101.00.7 | Կրթական գիտություններ | | 1 | |

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ԲՈՒՀԵՐ

| Բուհը<br>Մասնագիտությունը | | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|---|
| **Հայ-ռուսական համալսարան** | | **25** | 25 | 0 |
| **«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ** | | **3** | 3 | 0 |
| 041401.00.7 | Շուկայագիտություն (մարքեթինգ) | | 1 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 1 | |
| 042101.00.7 | Իրավագիտություն | | 1 | |

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ԲՈՒՀԵՐ

| Բուհը<br>Մասնագիտությունը | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|
| **Հայաստանի ամերիկյան համալսարան** | 20 | 17 | 3 |
| **«Եվրոպական համալսարան» հիմնադրամ** | 8 | 8 | 0 |

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2019 թվականի
______________N ________որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Բուհը<br>Մասնագիտությունը | | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲՁ) |
|---|---|---|---|---|
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ** | | 17 | 14 | 3 |
| 061101.00.7 | Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) | | 1 | |
| 022801.00.7 | Արևելագիտություն | | 1 | |
| 041301.00.7 | Կառավարում | | 1 | |
| 041401.00.7 | Շուկայագիտություն (մարքեթինգ) | | 1 | |
| 041201.00.7 | Ֆինանսներ | | 1 | |
| 042101.00.7 | Իրավագիտություն | | 2 | |
| 071403.00.7 | Ռադիոտեխնիկա և կապ | | 1 | |
| 031301.00.7 | Հոգեբանություն | | 1 | |
| 031801.00.7 | Միջազգային հարաբերություններ | | 1 | |
| 052201.00.7 | Բնապահպանություն և բնօգտագործում | | 1 | |
| 052101.00.7 | Շրջակա միջավայրի գիտություններ | | 1 | |
| 051101.00.7 | Կենսաբանություն | | 1 | |
| 054101.00.7 | Երկրաբանություն | | 1 | |

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱ-ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

| **ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան** | | | | |
|---|---|---|---|---|
| Մասնագիտությունը | | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
| 103101.00.7 | Միավորումների և զորամասերի կառավարում | 25 | 25 | 0 |

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

| Բուհը<br>Մասնագիտությունը | | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|---|
| **ՀՀ ոստիկանության կրթահամալիր** | | **10** | **10** | **0** |
| 042101.00.7 | Իրավագիտություն | 10 | 10 | 0 |

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱ-ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

| Բուհը<br>Մասնագիտությունը | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա** | 41 | 38 | 3 |

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

| Բուհը<br>Մասնագիտությունը | | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|---|
| **Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)** | | **3** | **3** | **0** |
| **055101.00.7** | **Ֆիզիկա** | 3 | 3 | 0 |

Հավելված N 10
ՀՀ կառավարության 2019 թվականի
_______________N _________որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

| Բուհը<br>Մասնագիտությունը | Ընդամենը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) | Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) |
|---|---|---|---|
| **Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ** | **2** | **2** | **0** |

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

| | |
|---|---|
| 1. | **Անհրաժեշտությունը** |
| | ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին » ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներից: |
| 2. | **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները** |
| | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը ձևավորվել են 2014 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության հմ. 1191-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկին համապատասխան:<br>2019-2020 ուստարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերն՝ ըստ մասնագիտությունների ձևավորելիս հաշվի է առնվել շահագրգիռ կազմակերպությունների և մարմինների կողմից ներկայացված հայտերը:<br>Նախապատվությունը տրվել է տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, բնագիտական և տնտեսության համար առաջնային նշանակություն ունեցող մասնագիտություններին: Մրցույթային կարգով 91 տեղ կհատկացվի ազգային բանակից զորացրված (ԲԶ) դիմորդներին:<br>ՀՀ պաշտպանության նախարարությունը Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանին առաջարկել է հատկացնել 25 տեղ (նախորդ ուսումնական տարվա 20 տեղի փոխարեն), որի հետևանքով 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը 5-ով կավելանա (1355): |
| 3. | **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականություն** |
| | Նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի ընդունելությունը:<br>Նախագծով նախատեսում է 2019/2020 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրի համար 1355 տեղ, որից 91-ը՝ բանակից զորացրված դիմորդների համար:<br>-Ընդունելության տեղերը նախագծելիս նախապատվությունը տրվել է տնտեսության զարգացման համար առաջնային կարևորություն ունեցող մասնագիտություններին, ինչպիսիք են՝ տեղեկատվական տեխնոլոգիաները, տեղեկատվական անվտանգությունը, ծրագրային ճարտարագիտությունը, զբոսաշրջությունը, բնագիտական, ագրարային, շուկայագիտության (մարքեթինգի), հայագիտական և այլն :<br>- Ըստ բուհերի ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի են առնվել |

| | |
|---|---|
| | համապատասխան մասնագիտությունների գծով աշխատաշուկայում առկա պահանջարկը, բակալավրիատի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների թիվը, ինչպես նաև լիցենզիայով բուհերին հատկացված տեղերի քանակը:<br>-Նախագծում ընդունելության տեղերը ձևավորելիս սոցիալական խմբերը չեն ներառվել, քանի որ պետության կողմից ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը կարգավորվում է 2006 թ. հուլիսի 27-ի ՀՀ կառավարության հմ. 1183-Ն որոշմամբ:<br>- Նախագծով նախատեսված պահուստային տեղերը հատկացվում են ընդունելության մրցույթի արդյունքում հավասար միավորներ (ՄՈԳ) ունեցող, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) դիմորդներին: Պահուստային տեղերի բաշխումն իրականացվում է ընդունելության մրցույթի անցկացմանը զուգընթաց և մինչև ուսումնական տարվա սկիզբը դրանք հատկացվում եմ բուհերին:<br>- Ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի է առնվել նաև ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագիրը, համաձայն որի պետության համար առաջնային և կարևորություն ունեցող ոլորտները կապահովվեն համապատասխան մասնագետներով: Մասնավորապես տեղեր են հատկացվել՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին-108, հայագիտության ոլորտին-22, առողջապահության ոլորտին-18, սպորտի ոլորտին-30, զբոսաշրջության և սերվիսի ոլորտներին-13, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտին-10 տեղ, գյուղատնտեսության ոլորտին-13, էներգետիկայի ոլորտին-20 տեղ և այլն:<br>Բարձրագույն կրթության քաղաքականության թիրախային խնդիրներից են հասանելիության և մատչելիության ապահովումը, ուսանողների ընդհանուր թվակազմում ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորողների թվաքանակի ավելացումը: |
| 4. | **Կարգավորման նպատակը և բնույթը** |
| | Նախագծի ընդունման նպատակն է կանոնակարգել բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրոսի կրթական ծրագրով տեղերի ընդունելութունը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես նաև կարգավորել իրավական դաշտը տվյալ բնագավառում: |
| 5. | **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտներն ու անձինք** |
| | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունները, Արցախի Հանրապետությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ոստիկանությունը: |
| 6. | **Ակնկալվող արդյունքը** |
| | Նախագծի ընդունմամբ կապահովվի բարձրագույն կրթության շարունակականությունը և բարձր որակավորմամբ կադրերի պատրաստումը՝ ըստ կրթական ծրագրերի: Այն կնպաստի պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստմանը: |

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին**

Ներկայացվող «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն՝ ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**<<Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին**

Ներկայացվող «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն՝ ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական կամ տեղական բյուջեում եկամուտների կամ ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսում:

Մագիստրատուրայի ընդունելության անհրաժեշտ ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի միջոցների հաշվին:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

<<Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

| Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|
| ՀՀ ոստիկանության ս/թ մարտի 6-ի հմ. 01.6/24/6464-19 գրություն | Նախագծի վերաբերյալ առարկություն և առաջարկություն չունի | - | |
| ՀՀ առողջապահության նախարարության ս/թ մարտի 12-ի հմ. ԱԹ/05/3574-19 գրություն | Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի | - | |
| ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ս/թ մարտի 6-ի հմ.01ԳԲ/15ՆարՍ/1056-19 | Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի | - | |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարության ս/թ մարտի 11-ի հմ. ԳԳ/ՄԱ/1064-19 գրություն | Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի | - | |
| ՀՀ մշակույթի նախարարության ս/թ մարտի 6-ի հմ. 05/2.1/1239-19 գրություն | Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի | - | |
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ս/թ մարտի 11-ի հմ. 01/20.1/2780-19 գրություն | Առաջարկվում է ավելացնել ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), էլեկտրոնիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական անվտանգություն, էլեկտրատեխնիկա, տեղեկատվական համակարգեր, համակարգչային ճարտարագիտություն, մաթեմա- | Առաջարկը չի ընդունվել<br><br>- | Նախագծով ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), էլեկտրոնիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական անվտանգություն, էլեկտրատեխնիկա, տեղեկատվական համակարգեր, համակարգչային ճարտարագիտություն, մաթեմատիկա, մեխանիկա, ֆիզիկա, ռադիոֆիզիկա, ռադիոտեխնիկա և կապ, կենսաֆիզիկա, ծրագրային ճարտարագիտություն մասնագիտու- |

| | | | |
|---|---|---|---|
| | տիկա, մեխանիկա, ֆիզիկա, ռադիոֆիզիկա և կապ, կենսաֆիզիկա, ռադիոտեխնիկա և կապ, ծրագրային ճարտարագիտություն, տեղեկատվական համակարգեր ուսուցման տեղերի թիվը: | | թյուններին հատկացվել է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) 149 տեղ, այդ թվում՝ ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)-8 տեղ, էլեկտրոնիկա-17 տեղ, տեղեկատվական տեխնոլոգիաներ-11 տեղ, տեղեկատվական անվտանգություն-12 տեղ, էլեկտրատեխնիկա-7 տեղ, տեղեկատվական համակարգեր 10 տեղ, համակարգչային ճարտարագիտություն-16 տեղ, ծրագրային ճարտարագիտություն-22 տեղ և այլն: Հարկ է նշել, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն անվճար տեղերի ավելացման վերաբերյալ հիմնավորում չի ներկայացրել: Միաժամանակ տեղեկաց-նում եմ, որ լրացուցիչ տեղերի ավելացումը կբերի պետական բյուջեի ծախսերի ավելացման |
| ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ս/թ մարտի 7-ի հմ. 1/05/279-19 գրություն | Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի | | |
| ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ս/թ մարտի 13-ի հմ. 01/15.2/1944-19 գրություն | Նախագծի վերաբերյալ դիտողություն և առաջարկություն չունի | | |
| ՀՀ բնապահպանության նախարարության ս/թ մարտի 11-ի հմ. 1/07.2/10479-19 գրություն | Նախագծի հավելված N 2-ի աղյուսակում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ բաժինը լրացնել նոր՝ «էկոլոգիա» մասնագիտությամբ-2 անվճար տեղ», իսկ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ բաժինը՝ «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտությամբ -2 անվճար տեղ»:<br>Առաջարկը պայմանավորված է հանրապետությունում էկոլոգիական խնդիրների առկայությամբ և բնապահպանության բնագավառի մասնագետների անհրաժեշտությամբ: | | Նախագծով Երևանի պետական համալսարանի <<051101.00.7 Կենսաբանություն>> մասնագիտությանը հատկացվել է 5 պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղ, որի շրջանակում իրականացվելու է «051101.06.7–էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում» կրթական ծրագիրը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի <<031101.00.7–Տնտեսագիտություն>> մասնագիտությանը՝ 22 տեղ (անվճար), որի շրջանակում իրականացվելու է <<031101.05.7 Բնօգտագործման տնտեսագիտություն>> կրթական ծրագիրը՝ 2 անվճար տեղով: |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցե-րի նախարարության ս/թ մարտի 6-ի հմ. ԶԲ/ԺՄ-3-4/3222-19 գրություն | «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնա-կան հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստա-տելու մասին» Հայաստանի Հանրա-պետության կառավարության որոշման նախագծի մշակման շրջանակներում խնդրում ենք հաշվի առնել մեր 27.02.2019թ. N ԶԲ/ԺՄ-3-4/2932-19 գրությամբ ներկայացված առաջարկներն ու կցված վերլուծական նյութը: | | Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը ձևավորե-լիս հաշվի է առնվել աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-րարության կողմից ներկայացված վերլուծությունը: |
| ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ս/թ մարտի 25-ի հմ. 01/08.3.1/2291-19 գրություն | «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնա-կան հաստատությունների 2019/2020 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստա-տելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հավելված 2-ում և 5-ում տվյալագետ (Data Scientist) մասնագիտության գծով տեղերի քանակն ավելացնել՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև հավելված 1-ում: | | Նախագծի 2-րդ հավելվածում Երևանի պետական համալսարանի «056201.00.7-Վիճակագրություն» մաս-նագիտության «056201.04.7-Կիրա-ռական վիճակագրություն և տվյալների գիտություն» կրթական ծրագրին հատկացվել է 2 պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղ, իսկ «031101.00.7-Տնտեսագիտություն» մասնագիտու-թյանը հատկացվել է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) 7 տեղ, որի շրջանակում իրականացվելու է «031101.19.7–Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագիրը: Ինչ վերաբերում է հավելված 5-ին, ապա ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը վերոնշյալ կրթական ծրագրերով գործունեություն ծավալելու վերաբերյալ լիցենզիա չունի: |
| ՀՀ ֆինանսների նախարարության ս/թ մարտի 26-ի հմ. 01/8-3/4550-19 գրություն | Առաջարկում ենք Նախագծերի հիմնավորումներով, իսկ անհրաժեշտության դեպքում Նախագծերով բացահայտել և/կամ որոշակիացնել, թե ինչ սկզբունքներով և մոտեցումներով են սահմանվում (ընտրվում) և բաշխվում Ընդունելության տեղերը, ըստ.<br>-մասնագիտությունների՝ այդ թվում պետության համար առաջնահերթ և կարևորություն ունեցող ոլորտների. | Առաջարկն ընդունվել է. | Նախագծի հիմնավորումներում լրացվել են հետևյալ սկզբունքները.<br><br>-Ընդունելության տեղերը նախա-գծելիս նախապատվությունը տրվե է տնտեսության զարգացման համար առաջնային կարևորություն ունեցող մասնագիտություններին, ինչպիսիք են՝ տեղեկատվական տեխնոլոգիաները, տեղեկատվական անվտանգությունը, ծրագրային ճարտարագիտությունը, զբոսաշրջությունը, բնագիտական, ագրարային, շուկայագիտության (մարքեթինգի), հայագիտական և այլն :<br>- Ըստ բուհերի ընդունելության տեղերը ձևավորելիս հաշվի են առնվում |

| | | | |
|---|---|---|---|
| | -բարձրագույն ուսումնական հաստատություն-ների (այսուհետ՝ ԲՈՒՀ-երի). <br>-ըստ ուսանողների սոցիալական խմբերի <br>-պահուստային տեղերի՝ նշելով վերջինների սահմանման նպատակահարմարությունը և տարվա ընթացքում այդ տեղերի բաշխման սկզբունքը <br>-ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթությունների և քաղաքականության թիրախների: | | համապատասխան մասնագիտություն-ների գծով աշխատաշուկայում առկա պահանջարկը, բակալավրիատի բարձր առաջադիմություն ունեցող շրջա-նավարտների թիվը, ինչպես նաև լիցենզիայով բուհերին հատկացված տեղերի քանակը: <br>-Նախագծում ընդունելության տեղերը ձևավորելիս սոցիալական խմբերը չեն ներառվել, քանի որ պետության կողմից ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը կարգավորվում է 2006 թ. հուլիսի 27-ի ՀՀ կառավարության հմ. 1183-Ն որոշմամբ: <br>- Պահուստային տեղերը հատկացվում են ընդունելության մրցույթի արդյունքում հավասար միավորներ (ՄՈԳ) ունեցող, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվո-րական ծառայությունից զորացր-ված (ԲԶ) դիմորդներին: Պահուստային տեղերի բաշխումն իրականացվում է ընդունելության մրցույթի անցկացմանը զուգընթաց և մինչև ուսումնական տարվա սկիզբը դրանք հատկացվում եմ բուհերին: <br> - Ընդունելության տեղերը ձևա-վորելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2019թ. ծրագիրը, համաձայն որի պետության համար առաջնային և կարևորություն ունեցող ոլորտները կապահովվեն համապատասխան մասնագետներով: Մասնավորապես տեղեր են հատկացվել՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին-108, հայագիտության ոլորտին-22, առողջապահության ոլորտին-18, սպորտի ոլորտին-30, զբոսաշրջության և սերվիսի ոլորտներին-13, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտին-10 տեղ, գյուղատնտեսության ոլորտին-13 տեղ, էներգետիկայի ոլորտին-20 տեղ և այլն: Բարձրագույն կրթության քաղա-քականության թիրախային խնդիր-ներից են հասանելիության և մատչելիության ապահովումը, ուսանողների ընդհանուր թվակազմում ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորողների թվաքանակի ավելացումը |
| ՀՀ պաշտպանության նախարարության ս/թ մարտի 26-ի հմ. ՊՆ/510/124-2019 գրություն | Դիտողություն և առաջարկություն չկա | | |
| ՀՀ արդարադատու-թյան նախարարու-թյան ս/թ ապրիլի 5-ի հմ. 01/14/7234-19 գրություն | Նախագիծը համապատասխանում է օրենսդրությանը: | | |
| Հանրային քննարկում | Դիտողություն և առաջարկություն | | |

| | | | |
|---|---|---|---|
| | չկա | | |